



Ցանցերով խաղավայրը
 Այս խաղավայրը հիւսուած է մեծ գուրգուրանքով եւ սիրով՝ գոյգի մը կողմէ: Կին մը եւ իր ամուսինը թռներով թել գործածած են հիւսելու եւ քրոշէ ընելու այս գունաւոր մագլցելու ցանցերը, որոնց մէնք կրնանք հանդիպիլ Ճափոնի, Սինկափուրի, Չինաստանի եւ Սպանիոյ մէջ:



ՏԱՐՕՐԻՆԱԿ ԽԱՂԱՎԱՅՐԵՐ

Եկէ՛ք միասին այցելենք աշխարհին շուրջ գտնուող տարբեր խաղավայրեր

Ծռած շոգեկառքը

Մանուկները շատ կը սիրեն Սինկափուրի «Թինկ Պահրու փարք ատեվենչըր» խաղավայրին մէջ գտնուող այս ծուռ վակոններով շոգեկառքը: Այս արտասովոր խաղավայրին մէջ կը գտնուին նաեւ մարդու չափով փոքրիկ լաբիրինթոսի խաղ մը եւ մարդու ուժով բանող կարուսել մը:

Վայրի անտառին մէջ

Ամերիկայի Թեննիսի նահանգին «Նաշվիլ գուգ ճանկըլ ճիմի» խաղավայրին մէջ գոյութիւն ունի 10.6 քառ. մէթր մեծութիւն ունեցող ծառի վրայ տուն մը՝ «Կեանքի ծառը», ուր կարելի է սահիլ օձածել սահնակներէ, մագլցիլ քարէ գետածիի մը կռնակին վրայ...

Խաղավայրը այնքան մեծ է, որ հոն նոյն ատեն կրնան խաղալ աւելի քան հազար մանուկներ:



Բլուրի մը լանջին

Արուեստագետներու խումբ մը Չիլիի մէջ փորած է այս «Պոյսենթենալ չիլըրընգ փարք» խաղավայրը, Սանթիակո քաղաքին բլուրներէն մէկուն լանջին վրայ: Բլուրին գագաթը բարձրանալու համար պէտք է առնել էլեկտրական կառքը եւ ապա իջնել տասնեակ մը սահնակներէն մէկուն վրայէն սահելով, կամ գագաթին վրայ մնալ՝ զմայլելու համար բացուող տեսարանով:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՐ՝ ՈՒՐԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՈՒԲԵԱՆ
 ՆԿԱՐԱՋԱՐՈՒՄԵՐ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՄԵՆ

ՃԻՇԴ, ԹԷ՞ ՍԻԱՎ

- 1.- Ք.ա. 1332-ին «մանչուկ թագաւոր» Թուրանխամոն փարաւոն կը դառնայ 6 տարեկանին:
ճի՞շդ, թե՞ սխալ
- 2.- 1454-ին Եոհաննէս Կութենպերկ առաջին անգամ ըլլալով կը գործածէ տպագրիչ մեքենան՝ մեծ քանակով տպելու համար հեքիաթներու գիրք մը:
ճի՞շդ, թե՞ սխալ
- 3.- 28 Յունիս 1914-ին Աւստրիոյ Ֆերտինանտ մեծ դուքսը կը սպանուի, եւ այդ պատճառով կը սկսի Ա. Համաշխարհային պատերազմը:
ճի՞շդ, թե՞ սխալ
- 4.- 20 Յուլիս 1969-ին, աստղանաւորդ Նիլ Արմսթրոնկ կը նետէ մարդկութեան առաջին քայլը լուսինին վրայ:
ճի՞շդ, թե՞ սխալ
- 5.- Ք.ե. 79 թուականին երկրաշարժ մը կը հարուածէ Իտալիան՝ կործանելով Պոմպեյ քաղաքը:
ճի՞շդ, թե՞ սխալ



:մէջտեղէն չ գոմայոմ մըրսմեմոթ
դվոյսմոմպ ովիսոցի 'ուովր - Գ
նշվց - Դ
նշվց - Ե
:մըղսշոթուստող
չ գոնչ մմմվե գուսիտ
իսիողոմ զգր դվճուսո 'ուովր - Զ
:դվողիցմոտ մղվ րողսոն մի
դսոմոփ դո 'ուովր - Ը
վզողոմոմոտու



ԽԱՎՂԵՐ

Ծանօթ եւ անասուններու ձայներուն

Իւրաքանչիւր անասուն միացո՛ւր իր ձայնին:

- առիծ
- ոչխար
- ծի
- կով
- թռչուն
- խոզ
- գայլ
- կատու
- օձ
- շուն

- մլաւին - կը մլաւէ
- սուլոց - կը սուլէ
- մռնչին - կը մռնչէ
- հաջոց - կը հաջէ
- խրխնջին - կը խրխնջայ
- բառաչին - կը բառաչէ
- խանչին - կը խանչէ
- մային - կը մայէ
- ոռնոց - կ'ոռնայ
- կոկոնոց - կը կոկոնայ

Պակսող թիւը

Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր շարքի ճերմակ քառակուսիին թիւը, ունենալու համար ճիշդ հաւասարութիւն մը:

$$25 \times 8 \times \square = 1000$$

$$35 + 24 + \square = 80$$

$$125 - \square - \square = 50$$

$$540 / 9 / \square = 20$$

$$150 - \square \square + 20 = 100$$

$$360 \text{ փ } 60 \times \square = 90$$

Պատասխաններ
5 21 35 3 70 15

ԺՊԻՏ

- Դպրոցը թուաբանութիւն կը սորվի՞ս, տղա՛ս:
- Անշուշտ, մե՛ծ մամա:
- 2 x 2 քանի՞ կ'ընէ:
- Դիւրին է մեծ մամա, 4 կ'ընէ:
- Շատ լաւ, ուրեմն քեզի 4 հատ շոքոլայ:
- Մեծ մամա, կարծեմ սխալեցայ, 8 կ'ընէ:

ՄՐՋԻՒՆՆ ՈՒ ԼՈՒՆ

Ղազարոս Աղայեան

Հաւը պատասխանեց.

- Եթէ ինծի կուտ բերե՛ս...

Լուս թռչկոտելով հասաւ ցորենի հորին քով ու ըսաւ.

- Հորի՛կ, հորի՛կ, կուտի՛կ տուր, կուտիկը տանիմ հաւուն տամ, հաւը ինծի ձագուկ տայ, ձագուկը տամ ագռաւին, ագռաւը հեռանայ կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ պարանը առուին մէջ նետեմ, մրջին եղբայրս ազատեմ:

Հորը պատասխանեց.

- Եթէ մուկը ինձմէ հեռացնե՛ս...

Լուս թռչկոտելով հասաւ մուկին եւ ըսաւ.

- Մկնի՛կ, մկնի՛կ լսե՛ ինծի, ցորենի հորին մի՛ դաւար, որ հորիկը ինծի կուտիկ տայ, կուտիկը տամ հաւիկին, հաւիկը ինծի ձագուկ տայ, ձագուկը տամ ագռաւին, ագռաւը հեռանայ կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը առուին մէջ նետեմ, մրջին եղբայրս ազատեմ:

Մուկը պատասխանեց.

- Եթէ զիս կատուն ազատե՛ս...

Լուս թռչկոտելով հասաւ կատուն եւ ըսաւ.

- Փիսի՛կ, փիսի՛կ, ճամբա՛յ տուր մուկին, մուկը հեռանայ հորէն, որ հորիկը ինծի կուտիկ տայ, կուտիկը տանիմ հաւուն տամ, հաւիկը ինծի ձագուկ տայ, ձագուկը տամ ագռաւին, ագռաւը հեռանայ կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը նետեմ առուին մէջ, մրջին եղբայրս ազատեմ:

Կատուն պատասխանեց:

- Եթէ ինծի կաթ բերե՛ս...

Լուս թռչկոտելով հասաւ կովուն եւ ըսաւ.

- Կովի՛կ, կովի՛կ, կաթի՛կ տուր, կաթը տանիմ կատուն տամ, կատուն մուկին չդպչի, մուկը հեռանայ հորէն, հորիկը ինծի կուտիկ տայ, կուտիկը տանիմ հաւուն տամ, հաւը ինծի ձագուկ տայ, ձագուկը տամ ագռաւին, ագռաւը հեռանայ կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը նետեմ առուին մէջ եւ մրջին եղբայրս ազատեմ:

Կովը պատասխանեց.

- Եթէ ինծի խոտ բերե՛ս...

Լուս գնաց դաշտէն խորձ մը խոտ քաշեց, տարաւ կովուն տուաւ: Կովը անոր կաթ տուաւ, կաթը տուաւ կատուն, կատուն հաշտուեցաւ մուկին հետ, մուկը հորին չդպաւ, հորը լուին կուտ տուաւ, կուտը տարաւ հաւիկին, հաւը անոր ձագ տուաւ, ձագը բերաւ ագռաւին, ագռաւը հեռացաւ կաղնիէն, կաղնին ալ կաղին տուաւ, կաղինը խոզին տուաւ, խոզը մագիկ մը տուաւ, այդ մագէն պարան մը շինեց, պարանով կամուրջ շինեց ու մրջին եղբայրը ազատեց:

(Վերջ)



ԱՆՅԱԲԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԻ

ԽԱՂԱՆՔ ՀՆԴԻԿՆԵՐՈՒ ՆՄԱՆ

* Մրրիկներուն մեծ մասը տեղի կ'ունենայ կեսօրէ ետք ժամը 3:00-ին եւ գիշերուան ժամը 9:00-ին միջեւ:

* Կարգ մը խողովակի նման որդեր կրնան ապրիլ մինչեւ 600 տարի, ովկիանոսներուն խորերը:

* 2016-ի Ողիմպիական խաղերուն 14 երկիրներ միայն մէկ մարզիկ դրկեցին մրցաշարքին:

* Եթէ երկրագունդը լուսին չունենար, ան այնքան պիտի դառնար, որ օրը միայն վեց ժամ պիտի տւէր:

* Դանիոյ մէջ արուեստագետ մը շինեց վեց «մոռցուած հսկաներու» արձանները եւ պահեց որպէսզի հետախոյզներ գտնուէին փնտռել:

* Չինաստանի մէջ կը խօսուին մօտաւորապէս 235 տարբեր լեզուներ:

* Աղի ջուրի կոկորդիլոսը կրնայ իր բերանը բաց ձգել՝ իր ուղեղը գովացնելու համար:

* Էյֆել աշտարակը ներկելու համար կը գործածուի 59 թոն ներկ:

* Թայլանտի մէջ մարդիկ Նոր Տարին կը տօնեն իրարու վրայ ջուր թափելով:

* 55 միլիոն տարիներ առաջ Անթարքթիքայի (Հարաւային Բեւեռ) մէջ սառոյց չկար:

Ընկերներով հաւաքուած էք գիւղը կամ ծովագերքը եւ շուարած էք՝ ինչ ընել: Կրնաք հնդիկներու նման ճամբու խաղ մը կազմակերպել՝ «պահուած գանձը» գտնելու համար: Այս խաղին համար պարզապէս պէտք պիտի ունենաք կա՛մ կաւիճի մը, կա՛մ ալ փայտի կտորի մը: «Պահուած գանձը» կրնայ ըլլալ որեւէ բան, կամ նոյնիսկ ձեռային աշխատանքով շինուած մետաղ մը կամ բաժակ մը: Այս սիւնակին մէջ պիտի գտնէք հրահանգներ տուող տարբեր նշաններ, սակայն դուք ալ կրնաք հնարել ձեր անձնական նշանները:

- 1.- ճամբուն սկիզբը
- 2.- Հետեւիլ ուղղութեան
- 3.- Սխալ ճամբայ
- 4.- ճամբու վերջաւորութիւն
- 5.- Պահուած նամակ
- 6.- Արգելքին վրայէն անցնիլ
- 7.- Մինչեւ ծառ երթալ
- 8.- Ետ դառնալ
- 9.- Վառել
- 10.- Մինչեւ տուն երթալ
- 11.- Ջուրին հետեւիլ (գետակ, լիճ կամ՝ ծով)
- 12.- Հոս սպասել

